5. Սահակ վարդապետ Ահագին («սակս ահագնալեօ եւ փողաբարբառ որոտալոյն շբանն ձենայ»)[1]։
6. Սարգիս վարդապետ Շնորհալի։
7. Ադամ վարդապետ։
8. Յովհաննէս վարդապետ Ժամկոչեան։
9. Պօղոս վարդապետ։
10. Ստեփան վարդապետ.
11. Ղազար վարդապետ Պոնտոսեան, «որ Անմարմին կոչիւր.»։
12. Յովհաննէս վարդապետ Սեթէֆճի օղլու։
13. Գրիգոր վարդապետ Խաշէ։
14. Կարապետ վարդապետ Ճամպազեան՝ Նաւան Պետրոսէ։[2]
15. Աւետիք վարդապետ։
16. Սամուէլ վարդապետ։

---

[1] Մեր ցանկը թերի է անշուշտ։ Շղթայակիր կը յիշէ չորս ընտիր վարդապետ, որոնց մէկն ալ Պալատցի Յակոբ վարդապետն է, որ չկայ այս ցանկին մէջ։ — Երբ Շղթայակիր Պոլիս կու գար (1736 Յուլիս)․ Կոլոտ ի պատիւ իր գլխաւոր չորս վարդապետները մինչեւ Քէօթահեա դիմաւորելու ղրկեց, ուրիշներու հետ միասին։

«Եւ ի Բիւզանդիոյ՝ Մեծ պատրիարքն Յովհաննէս Աստուածաբան վարդապետն լուեալ զխնդութեամբ գալն մեր անդ (= ի Քէօթահեա), իսկոյն առաքեաց ընդ առաջ զչորեսին գլխաւոր վարդապետսն՝ զՅարութիւն (= Հեզահոգի), զՅակոբ (= Նալեան) զՍահակ (= Ահագին) եւ զՊալատցի Յակոբ աստուածաբան պետսն հանդերձ այլովք՝ Եւ մեք Աստուծով սակաւ ոգի առեալ. նորօք հանդերձ եկաք յօրհնեալ քաղաքէն յայնմանէ, բազում շնորհակալութեամբ եւ անչափ օրհնելով զնոսա.» (Սիոն 1866 էջ 125)։

[2] Կարապետ եւ Աւետիք վարդապետներու անուններուն մէջտեղ վերջակէտներով զատուած էր «Նաւան Պետրոսեան», հետեւաբար չկրցայ վճռել թէ Կարապետ վարդապետին է այն թէ Աւետիք վարդապետ։ Թէեւ ուրիշ ձեռագրի մը համեմատ Աւետիք վարդապետին տրուած է «Նաւան Պետրոսեան» տիտղոսը։